Տ. ԳԵՂԱՐԴ ԱԲԵՂԱՅ ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆԻ ՔԱՐՈԶԸ՝ ԽՕՍՈՒՄ Ս. ՀՌԻՓՍԻՄԷ ՎԱՆՔՈՒՄ Ս. ՀՌԻՓՍԻՄԵԱՆՑ ՏՕՆԻ ԱՌԻԹՈՎ

(17 յունիսի 2019 թ.)

Յանուն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ. ամէն։

«Ցնծասցէ անձն իմ ի Տէր, զի զգեցոյց
ինձ հանդերձ փրկութեան
եւ պատմուճան ուրախութեան»
(Ես. ԿԱ. 10)։

ՍԻՐԵԼԻՆԵ՛Ր, ահա այսօր միատեղուած ենք այստեղ՝ Ս. Հռիփսիմէի անունը կրող այս տաճարում ու սրբատեղիում՝ յիշատակելու Հռիփսիմեանց կոյսերի տօնը։

Անձինք, ովքեր, ինչպէս գիտէք, իրենց կենցաղով, իրենց ապրած ընթացքով, որը կարդում ենք վկայաբանութեան մէջ, մեզ եւս մէկ անգամ գալիս են ապացուցելու եւ թելադրելու ապրել Քրիստոսով, ապրել Քրիստոսի սիրոյ համաձայն եւ լինել կատարեալ։ Սակայն ինչ է կատարելութիւնը, սիրելինե՛ր։

Հաւաքուել ենք աստուածային օրհնութեամբ եւ Ս. Հոգու ներկայութեամբ այս տաճարում եւ մասնակից ենք Սուրբ եւ Անմահ Պատարագի։

Սակայն ինչ կայ մեր ներսում եւ ինչ կայ Ս. Սեղանի վրայ։ Արդեօք նո՞յնն է այդ ցանկութիւնը՝ նմանուելու Ս. Հռիփսիմեանց կոյսերին, արդեօք նո՞յնն է ցանկութիւնը՝ կատարեալ դառնալու, ինչպէս Ս. Սեղանինն է կատարեալ։

Սիրելինե՛ր, մեր կեանքից ներս կատարելութեան միջոցները բազում են. մէկը կասի աղօթք, մէկը կասի ապաշխարութիւն, միւսը կասի սէր, միւսը՝ եղբայրասիրութիւն, խոնարհութիւն հեզութիւն եւ այլն։ Այդ ամէնը միջոցներ են։ Կատարելութիւնը Աստծուն նմանուելն ու Նրա պատկերն ունենալն է։ Ինչպէս դա կարող է լինել, եթէ սէր չունենք մեր մէջ։ Ինչպէս

դա կարող է լինել, եթէ մենք կանգնում ենք Ս. Պատարագին, կուրծք ենք ծեծում եւ ասում. «Տէ՛ր, ների՛ր ինձ՝ մեղաւորիս, արժանացրո՛ւ Ս. Հաղորդութեան», բայց չենք աղօթում կողքինի համար, չենք աղօթում մէկս միւսի համար։ Հռիփսիմեանց վկայաբանութիւնը դա էր։ Այսօրուայ խորհուրդը դա է։ Նրանք չառանձնացան, այլ միասնաբար նահատակութեան պսակն առան՝ չդրժելով իրենց ուխտը Քրիստոսի հետ, չդրժելով իրենց առաքելութիւնն այս աշխարհի վրայ, որ կոչւում է քրիստոնեայի կեանք։

Եւ հիմա մենք, սիրելինե՛ր, այսքան տարիներ ետք, ինչ խորհուրդ, խոկում ու մտածում ունենք այս առումով, ո՞վ ենք մենք այս աշխարհում, ո՞րն է մեր առաքելութիւնը։ Երբ կարդում ենք սրբոց վկայաբանութիւնները, ի՞նչ ենք սովորում։ Ինչ՞ն է դառնում մեր կեանքն ապրելու կարեւոր պայմանը. սէրը։ Եւ Քրիստոս Ինքը երկու կարեւոր պայման տուեց. «Սիրի՛ր քո Տէր Աստծուն եւ սիրի՛ր քո ընկերոջը» (հմմտ. Ղուկ. Ժ. 27)։ Ահա, երբ այդ սէրն ունենաք, սիրելինե՛ր, կատարելութեան մէջ կլինենք, որովհետեւ Աստուած ասում է՝ ով սիրում է ինձ, կպահի իմ պատուիրանները, իմ խօսքը կպահի։ Որ՞ն է Աստծոյ խօսքը. «Արդ՝ եղերուք դուք կատարեալք, որպէս եւ Հայրն ձեր երկնաւոր կատարեալ է» (հմմտ. Մատթ. Ե. 48)։ Եւ մէկ անգամ շեշտեմ՝ Հռիփսիմեանց կոյսերը այդ կատարելութեան ճանապարհը յստակ կերպով մեզ տալիս են։ Կեա՛նք Քրիստոսով, կեա՛նք՝ Քրիստոսի խօսքի համաձայն, եւ սէր։

Սիրելինե՛ր, ես իմ խոնարհ եղբայրական եւ որդիական շնորհակալութիւնն եմ յայտնում միաբանակից եղբայրներին՝ ինձ ընձեռնուած այս վսեմաշուք հնարաւորութեան համար՝ խօսելու եւ քարոզելու Ս. Հոգով լեցուն այս աստուածահաճոյ տաճարում՝ Հռիփսիմեանց կոյսերի անունը կրող այս Ս. Խորանից։

Թող Աստուած զօրացնի մեր Եկեղեցին, մեր միաբանութիւնը, սիրելի՛ եղբայրներ։ Աղօթքս է եւ խնդրանքս, որ միատեղ եւ միասնական աղօթակից լինենք մեր Եկեղեցու ամրութեան, միաբանութեան հաստատութեան եւ առաջընթացի, ինչպէս նաեւ մեր ժողովրդի, մեր այս համայնքի հոգեւոր զարգացման եւ հոգեւոր զարթօնքի համար։

Աստուած զօրացնի ամենքիս, եւ յիշէք սրբոց կուսանաց այսօրուայ ժամամուտի աղօթքը. «Բարեխօսութեամբ նրանց, Տէ՛ր Աստուած, աշխարհին խաղաղութիւն տու՛ր եւ մեր մեղքերին՝ թողութիւն» («Ժամագիրք»)։

Թող մեր Տէր եւ Փրկիչ Յիսուս Քրիստոս օրհնի ամենքիս։

Շնորհ, սէր Տէառն մերոյ եւ Փրկչին Յիսուսի Քրիստոսի եղիցին ընդ ձեզ եւ ընդ ամենեսեանս. ամէն։